այն Իրականության, որ Հայկական լեռնաշխարհում VII դարի վերջում մ. թ. ա. հաստատված հնդեվրոպական ժողովուրդները պատկանում էին կիմմերական ցեղախմբին, որ նրանք ներս են խուժել Կովկասյան շղթայից հարավ գլխավորապես Կասպից ծովի արևմտյան եզրին ձգվող նեղ հարթավայր հողաշերտով, որը միայն մի հատվածում, այժմյան Դերբենդի մոտ, այնքան նեղանում է, որ Կովկասյան շղթայի մի բազուկը գրեթե ընդհուպ մոտենալով ծովի ջրերին՝ թողնում է երթևեկության համար չափազանց փոքր տարածություն։ Այստեղ վերջը, բավականին ուշ, արհեստական ամրություններով մուտքը կապված էր։ Այդ ամրությունները ստացան Ճորա պահակ անունը։ Դրանք վերջին դարերի Դերբենդի պատերն են իրենց երկաթե դռնով։ Ջժխտելով այն փաստը, որ կիմմերական հրոսակների մի մասը մտել է Փոքր Ասիա՝ Ազովյան ծովի մոտից, շրջելով Սև ծովի հյուսիսով դեպի Բալկանյան թերակղզին և այնտեղից անցնելով նեղուցները, հասել է Անատոլիական բարձրավանդակով Հայկական լեռնաշխարհի արևմտյան երկրները, ես այն եզրակացության եմ եկել, որ կիմմերական ժողովուրդների մի այլ հատվածը, այն է՝ նրա արևելյան ճյուղը, որը ենթարկված է եղել ավելի ուժգին սկյութա-իրանական ազդեցությանը, սկյութական ժողովուրդների ճնշման ներքո, թողնելով իր հայրենիքը, ուղղվել է հարավ։ Մեծ Կովկասը ունենալով աջ կռանը այդ հատվածը, անցել է Կովկասի շղթայից հարավ ընտանիքներով, անասունով և հագին գույքով ծանրաբեռնված իր հոծ բազմությամբ՝ հալածող սկյութացիների անդադրում ճնշման տակ։ Այն ժամանակ էլ, ինչպես այսօր, միակ հարմար, բնականից գրեթե ոչ մի արգելքի չհանդիպող անցքն էր՝ Կասպից դուռը կամ Ճորա պահակը[24]։ Այդ ժողովրդական հեղեղը նախ և առաջ ողողել է Դուր և Արաքս գետերի ստորին հոսանքի տափաստանները և ապա բարձրացել Փոքր Կովկասի շղթայի վրա՝ սփռվել առանձին, բաժան-բաժան շիթերով Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան կողմերում։ Այդ շիթերից մեկը հենց առաջին հերթին թափանցել է Լեռնային Ղարաբաղի լանջերը և նրանց կից Զանգեզուրի հովիտները։ Կիմմերական ժողովրդական հեղեղի այդ շիթը դյուրությամբ կարող էր վեր մագլցել Լեռնային Ղարաբաղի, հնում՝ Արցախի գետահովիտներով վեր, դեպի նրանց վերնագավառները և ավելի հարավ՝ Ղարաբաղի շղթայի լեռնանցքներով։ Նրանցով այժմ էլ Մուղանի և Դաշտային Ղարաբաղի (Միլի) տափաստաններից ադրբեջանցի foշվor տնտեսությունները իրենց անասունը բարձրացնում են Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակի ամառային արոտավայրերը։ Սակայն ավելի ազատ, լայն ու հարմար ճանապարհ տափաստաններից դեպի հարավ բացվում էր Դիզակի դաշտի՝ այժմյան Ջեբրայիլի կողմից, Շահիյոլ ճանապարհի ուղղությամբ՝ Դիզափայտ գագաթից դեպի Արաքս փռվող դարավանդներով։ Այդ շիթը ողողել է Զանգեզուրի եռանկյունին, առանց նախ դրանից առաջ Արարատյան դաշտը մտնելու և այնտեղից արդեն իր շարժումը դեպի արևելք ուղղելու։ Այս վերջին ուղղությամբ նա պիտի հանդիպեր դժվար հաղթելի պատնեշին, այն է՝ Զանգեզուր-Ալանդյա-

---

[24] Ակադեմիկոս Հ. Մանանդյանը իր վերջին աշխատության մեջ (1944 թ.) փորձում է ապացուցել, որ հյուսիսային ժողովուրդների, մասնավորապես կիմմերների ներարշավի ուղին եղել է Սև ծովի ափով։ Այս «մեծ արշավի ճանապարհի» նրա գծման դեմ իմ առարկությունները ամփոփել եմ՝ «Կիմմերական ներարշավի ուղին Անդրկովկաս» հետազոտությանս մեջ, ապացուցելով, որ միակ ճանապարհը անցել է Կասպից ծովի ափով։